ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կաթնաղբյուր բնակավայր

02.05.2025 թ.

Սույն թվականի մայիսի 2-ին՝ ժամը 12:00-ին, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով և Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշմամբ սահմանված կարգով, տեղի ունեցավ «ԺԱՆ-ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված՝ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Կաթնաղբյուրի տուֆերի հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային 2-րդ լսումը:

Բացման խոսքով հանդես եկավ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Վարդան Հարությունյանը: Նա նշեց, որ փորձաքննության գործընթացն իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով և ներկայացրեց փորձաքննության գործընթացը, նշեց, որ փորձաքննության գործընթացին մասնակցել են պետական կառավարման մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները և ՇՄՆ ստորաբաժանումները, խոսեց նախատեսվող գործունեության արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների և բնապահպանական ռիսկերի մասին: Նշեց, որ նախաձեռնողը ՇՄԱԳ-ում նախատեսել է մի շարք մեղմացուցիչ միջոցառումներ, որոնք հնարավորություն կտան մեղմելու և նվազեցնելու հնարավոր ազդեցությունները: Հարությունյանը ներկաներին տեղեկացրեց, որ առաջարկություններ ունենալու դեպքում կարող են դրանք ներկայացնել բանավոր կամ ուղարկել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտոնական էլեկտրոնային փոստին և խոսքը փոխանցեց նախաձեռնողի ներկայացուցիչներին:

Նախաձեռնողի ներկայացուցիչները հակիրճ ներկայացրեցին արդյունահանման վերաբերյալ տեղեկատվություն՝ ներկա գտնվող բնակիչներից մի քանիսը դեմ արտահայտվեցին նախատեսվող գործունեության վերաբերյալ՝ նշելով, որ տվյալ տարածքի արդյունահանումը խանգարելու է անասունների տեղաշարժին, արածեցմանը, ինչպես նաև նշվեց, որ գյուղի վարչական տարածքը ծանրաբեռնված է հանքերով, հայցվող տարածքը մոտ է գյուղին՝ մոտ 400 մետր: Լսման ընթացքում ծավալվեց բուռն քննարկում նշված հարցերի վերաբերյալ, որին ի պատասխան Վ. Հարությունյանը ներկաներին տեղեկացրեց, որ

առաջարկությունները, բողոքները կարող են դրանք ներկայացնել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ:

Ներկաների կողմից այլ հարցեր չհնչեցին, Վ. Հարությունյանը ամփոփեց հանրային լսումը և շնորհակալություն հայտնեց ներկաներին:

Հանրային լսմանը մասնակցում էին ազդակիր համայնքի բնակիչներ, համայնքի և նախաձեռնողի ներկայացուցիչները:

Վարող և քննարկումների պատասխանատու՝ **Վ.Հարությունյան**

«ԺԱՆ-ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ **Մ. Հարությունյան**

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑԱՆԿ

«ԺԱՆ-ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արագածոտնի մարզի Թալին համայնքի Կաթնաղբյուրի տուֆերի հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային երկրորդ լսում

02.05.2025 թ.

Հ/Հ	Անուն, Ազգանուն	Կազմակերպության անվանում/ բնակության վայր	Կոնտակտային տվյալներ	Ստորագրության
1.	[illegible]	[illegible]		
2.	[illegible]	[illegible]		
3.	[illegible]	[illegible]		
4.	[illegible]	[illegible]		
5.	[illegible]	[illegible]		
6.	[illegible]	[illegible]		
7.	[illegible]	[illegible]		
8.	[illegible]	[illegible]		
9.	[illegible]	[illegible]		
10.	[illegible]	[illegible]		
11.	[illegible]		93-920591	
12.	[illegible]		098 356677	
13.				
14.				
15.				
16.				